



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԵՎԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Արևիկ համայնք, 22 փողոց, 4-րդ շենք, 098-82-44-44
arevik.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
«26» նոյեմբերի 2020 թվական N 24










**ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԵՆՍԱՊԱՀՈՎՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ
ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ
ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ և 42-րդ կետերով, համայնքի քնակչության կենսաապահովման խնդիրները լուծելու նպատակով.

Համայնքի ավագանին որոշում է՝

1. Զրամատակարարման, աղբահանության, գազի կաթսայի շահագործման և անխափան աշխատանքն ապահովելու, այգեպանի, էլեկտրիկի և անասնաբույժի ծառայությունների իրականացման համար համայնքում ձևակերպել հետևյալ հաստիքները՝
 - 1) Խմելաջրի ջրամատակարարման ապահովելու համար պատասխանատու՝ 1 միավոր 120000 (մեկ հարյուր քսան հազար) ՀՀ դրամ:
 - 2) Աղբահանություն կատարելու՝ աղբը տեղափոխելու համար տրակտորիստ՝ 1 միավոր 89700 (ութսունինը հազար յոթ հարյուր) ՀՀ դրամ: Աշխատանքները կատարվելու են աշխատողի սեփական տրակտորով:
 - 3) Գազի կաթսայի շահագործման և անխափան աշխատանքն ապահովելու համար 1 միավոր՝ 89700 (ութսունինը հազար յոթ հարյուր) ՀՀ դրամ: Աշխատանքի տևողությունը նոյեմբերի 15-ից մարտի 31-ը:
 - 4) Այգեպանի պարտականությունները կատարելու համար՝ 1 միավոր 89700 (ութսունինը հազար յոթ հարյուր) ՀՀ դրամ: Աշխատանքի տևողությունը մարտի 1-ից նոյեմբերի 30-ը:
 - 5) Էլեկտրիկի ծառայությունները մատուցելու համար՝ 0.5 միավոր՝ 55000 (հիսունհինգ հազար) ՀՀ դրամ:
 - 6) Անասնաբույժի ծառայությունները մատուցելու համար՝ 0.5 միավոր՝ 47000 (քառասունյոթ հազար) ՀՀ դրամ:

2. Սույն որոշմամբ սահմանված հաշվարկները կիրառել 2021 թվականի հունվարի 1-ից:
 3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ՝	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
1. Բեգլարյան Ջիվան		-----	-----
2. Ղարիբյան Ղուկաս		-----	-----
3. Գրիգորյան Գագիկ		-----	-----
4. Ալոյան Ալի		-----	-----
5. Շահնազարյան Հակոբ		-----	-----
6. Սիմոնյան Սարգիս		-----	-----
7. Արմենակյան Շավարշ		-----	-----
8. Ստեփանյան Վարդուհի		-----	-----
9. Բաղդասարյան Կարինե		-----	-----

Համայնքի ղեկավար՝



Գ. Ծատուրյան

2020 թվական ևոյեմբերի 26

Գ.Արևիկ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԵՎԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Արևիկ համայնք, 22 փողոց, 4-րդ շենք, 098-82-44-44
arevik_armavir@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

<<26>> նոյեմբերի 2020թ.

N 26 -Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԵՎԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 36-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածով և 34-րդ հոդվածի 1-ին մասով, <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասով և 33-րդ հոդվածի 4-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2020 թվականի հոկտեմբերի 6-ի թիվ 1646-Ն որոշումը և Հայաստանի Հանրապետության Արդարադատության նախարարության փորձագիտական եզրակացությունը՝

Համայնքի ավագանին որոշում է՝

- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևիկ համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 23-ի <<Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևիկ համայնքի 2020 թվականի բյուջեն հաստատելու մասին>> թիվ 36-Ն որոշման հավելվածում կատարել փոփոխություններ՝ համաձայն հավելվածի:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Ավագանու անդամներ՝	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
1. Բեգլարյան Զիվան		-----	-----
2. Ղարիբյան Ղուկաս		-----	-----
3. Գրիգորյան Գագիկ		-----	-----
4. Ալոյան Ալի		-----	-----
5. Շահնազարյան Հակոբ		-----	-----

6. Սիմոնյան Սարգիս

[Handwritten signature]

7. Արմենակյան Շավարշ

[Handwritten signature]

8. Ստեփանյան Վարդուհի

[Handwritten signature]

9. Բաղդասարյան Կարինե

[Handwritten signature]

Համայնքի ղեկավար՝



Գ. Մաստուրյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԵՎԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 36-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

1. Վարչական բյուջեի եկամտային մասում՝

- 1) Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)՝ 1261 տողում 0.0 թիվը փոխարինել 9914.4 թվով , համապատասխանաբար վարչական բյուջեի ծախսային մասում
04 բաժին 03 խումբ 2 դասում 5113 հոդվածում 9726.8 թիվը փոխարինել 19641.2 թվով:
- 2) Գույքահարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի - շինությունների համար՝ 1111 տողում 230.0 թիվը փոխարինել 130.0 թվով:
- 3) Գույքահարկ փոխադրամիջոցների համար՝ 1121 տողում 7800.0 թիվը փոխարինել 6800.0 թվով:
- 4) Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար՝ 1112 տողում 5500.0 թիվը փոխարինել 3400.0 թվով:
- 5) Համայնքի տարածքում ոգելից խմիչքների - (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի, իսկ հանրային սննդի օբյեկտներում՝ ոգելից խմիչքների - (կամ) ծխախոտի արտադրանքի իրացման թույլտվության համար՝ 1137 տողում 484.0 թիվը փոխարինել 180.0 թվով:
- 6) Համայնքի վարչական տարածքում գտնվող պետության - համայնքի սեփականությանը պատկանող հողամասերի կառուցապատման իրավունքի դիմաց գանձվող վարձավճարներ՝ 1333 տողում 1121.6 թիվը փոխարինել 321.6 թվով:
Տեղական վճարներ՝ 1351 տողում 1300.0 թիվը փոխարինել 600.0 թվով:

2. Վարչական բյուջեի ծախսային մասում՝

- 1) 01 բաժին 1 խումբ 1 դասում 4111 հոդվածում 21850.0 թիվը փոխարինել 18950.0 թվով,
- 2) 01 բաժին 1 խումբ 1 դասում 4212 հոդվածում 5500.0 թիվը փոխարինել 3500.0 թվով,
- 3) 01 բաժին 6 խումբ 1 դասում 4111 հոդվածում 3600.0 թիվը փոխարինել 2900.0 թվով,
- 4) 01 բաժին 1 խումբ 1 դասում 4252 հոդվածում 400.0 թիվը փոխարինել 576.0 թվով,
- 5) 01 բաժին 1 խումբ 1 դասում 4264 հոդվածում 300.0 թիվը փոխարինել 720.0 թվով:

ՀԻՄՆԱԿՈՐՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԻԿ ԳԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի ԹԻՎ 36-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2020 ԹՎԱԿԱՆԻ «ՆՈՅԵՄԲԵՐԻ» «26»-Ի N 26-Ն ՈՐՈՇՄԱՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևիկ համայնքի ավագանու 2020 թվականի «նոյեմբերի» «26»-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևիկ համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևիկ համայնքի 2020 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 36-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» թիվ 26 -Ն որոշման ընդունումը պայմանավորված է «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետի պահանջով, - դրա անհրաժեշտությունը կայանում է նրանում, որ հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2020 թվականի հոկտեմբերի 6-ի թիվ 1646-Ն որոշումը՝ հարկավոր է բյուջեի եկամտային մասում պլանավորել 9914.4 հազար ՀՀ դրամի չափով կապիտալ դրամաշնորհի և ծախսային մասում՝ կապիտալ ծախս՝ սուբվենցիոն ծրագրով գազատարի կառուցման աշխատանքների ծախսերը ֆինանսավորելու նպատակով, ինչպես նաև ծախսերի խնայողությունների հաշվին ավելացնել բյուջեից տրվող նպաստների գումարը՝ անապահով ընտանիքներին և հիմնադրամներին աջակցություն ցուցաբերելու նպատակով: Այլ կերպ ասած՝ այն ուղղված է համայնքի զարգացմանը նպաստելուն՝ բյուջետային համակարգի միասնականությունն ապահովող բյուջետային գործընթացի կազմակերպման համաձայնեցված սկզբունքների, բյուջետային դասակարգման, հաշվառման - հաշվետվության միասնական մեթոդաբանության հիման վրա:

Ըստի որ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևիկ համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևիկ համայնքի 2020 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 36-Ն որոշումը կրում է նորմատիվ իրավական բնույթ, ապա «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտում փոփոխություն կամ լրացում կարող է կատարվել միայն նույն տեսակի և բնույթի նորմատիվ իրավական ակտով:

ԳԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ՝



ԳԱՌՆԻԿ ԾԱՏՈՒԹՅԱՆ